Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց

Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

6-րդ դասարան

Դասղեկ՝ Հռիփսիմե Կարապետյան

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը	կատարող
1	Գիտելիքի օր:	Սեպտեմբեր	Դասղեկ, աշակերտ
2	Մարդկային հարաբերություններ	Սեպտեմբեր	Դասղեկ, աշակերտ
3	Իմ անկախ հայրենիք	Սեպտեմբեր	Դասղեկ, աշակերտ
4	Մեր օրյա անմահ հերոսներ	Սեպտեմբեր	Դասղեկ, աշակերտ,
5	Ինչպես կուզենայի լիներ քո վաղվա օրը	Հոկտեմբեր	Դասղեկ, աշակերտ
6	Կյանք կյանքի գնով	Հոկտեմբեր	Դասղեկ, աշակերտ
7	Պաշտպանել բնությունը՝ նշանակում է պաշտպանել հայրենիքը	Հոկտեմբեր	Դասղեկ, աշակերտ
8	Հայրենիք՝ ապահով մեր տանիք	Նոյեմբեր	Դասղեկ, աշակերտ
9	Պահպանենք ու սիրենք մեր մոլորակը	Նոյեմբեր	Դասղեկ, աշակերտ
10	Դաստիարակությունը տանը և դպրոցում:	Նոյեմբեր	Դասղեկ, աշակերտ
11	Ազնվություն և ճշմարտացիություն	Նոյեմբեր	Դասղեկ, աշակերտ
12	Քաղաքավարություն և բարեկրթություն	Նոյեմբեր	Դասղեկ, աշակերտ
13	Գնահատիր ժամանակը	Դեկտեմբեր	Դասղեկ, աշակերտ
14	Մաքրությունն առողջության երաշխիքն է	Դեկտեմբեր	Դասղեկ, աշակերտ

15	Եղիր հարգալից	Դեկտեմբեր	Դասղեկ, աշակերտ
16	Հագուստի կուլտուրա	Հունվար	Դասղեկ, աշակերտ
17	Խոսքի կուլտուրա	Հունվար	Դասղեկ, աշակերտ
18	Ճշտապահություն խոսքում և գործում	Հունվար	Դասղեկ, աշակերտ
19	Սեփական արարքների գնահատում	Հունվար	Դասղեկ, աշակերտ
20	Համերաշխ դասարան	Փետրվար	Դասղեկ, աշակերտ
21	Ինքդ սովորեցիր,սովորեցրու՛ ընկերոջդ	Փետրվար	Դասղեկ, աշակերտ
22	Գիրքը իմ կյանքում Այց գրադարան	Փետրվար	Դասղեկ, աշակերտ
23	Երաժշտությունը իմ կյանքում	Փետրվար	Դասղեկ, աշակերտ
24	Մարդ,որի կուզեի նմանվել	Մարտ	Դասղեկ, աշակերտ
25	Հանդուրժողականություն և բարություն	Մարտ	Դասղեկ, աշակերտ
26	Համակարգիչն՝ ընկեր թե թշնամի	Մարտ	Դասղեկ, աշակերտ
27	Ո՛չ վտանգավոր սովորույթներին	Ապրիլ	Դասղեկ, աշակերտ
28	Մասնագիտությունների մոլորակ	Ապրիլ	Դասղեկ, աշակերտ
29	Առողջ և անվտանգ ապրելակերպ	Ապրիլ	Դասղեկ, աշակերտ
30	Անվտանգ երթևեկություն	Ապրիլ	Դասղեկ, աշակերտ
31	Լավ է երբ…,վատ է երբ…/բանավեճ/	Մայիս	Դասղեկ, աշակերտ
32	Իմ կատարած բարի գործը	Մայիս	Դասղեկ, աշակերտ
33	Դպրոցական օրերի ուրախությունները	Մայիս	Դասղեկ, աշակերտ
34	Որտեղ և ինչպես եմ անցկացնելու ամառային արձակուրդներս	Մայիս	Դասղեկ, աշակերտ

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը) VI դասարանում սովորում է 8 աշակերտ՝ 5 տղա և 3 աղջիկ: Աշակերտները ցուցաբերում են տարբեր կարողություններ, ընդունակություններ և հմտություններ: Բոլորը սիրով են հաճախում դասերին: Պատրաստակամ են յուրաքանչյուր հարցում: Ընկերասեր են,ազնիվ և ջանասեր:

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում**: Դաստիարակությունը դպրոցական կրթության կարևոր բաղադրիչն է: Լիարժեք արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է օգնել երեխային արդյունավետ կերպով հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին, բարեխիղճ և համարժեք կերպով արձագանքել շրջապատում տեղի ունեցող երևույթներին:Աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի,մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրող,յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ:Ուսումնադաստիարակչական նախատեսվող գործընթացին կարևոր է նաև ընդգրկել ծնողներին:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն**: Երեխաներին հնարավորություն տալ ծանոթանալու իրենց հոգևոր և կրոնական ժառանգությանը՝ կազմակերպելով ինտերակտիվ հոգևոր զրույցներ աստվածաշնչյան ուսումնասիրություններ և թատերական ներկայացումներ: Խթանել երեխաներին զգալու իրենց հոգևոր արժեքները:

3.2 **Գեղագիտական դաստիարակություն**: Ուսուցիչներին սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնելու հոգևոր հարաբերություն,բարություն,սրտացավություն և դրա հինման վրա երեխայի մեջ արմատավորել գեղեցիկը:Այս համակարգում կարևոր դեր են խաղում ճանապարհորդությունները դեպի գեղեցիկի աշխարհը:

3.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն**: Երեխաների հետ խոսել հայրենիքի մասին,որ միայն հողն ու ջուրը չէ, որ արժանի և ենթակա պաշտպանության նրա զավակների կողմից:Հայրենիքը նաև մի մեծ տուն է,ընտանիք,որի հետ մարդը պետք է աշխատի և որին պետք է ծաղկեցնի,ղեկավարի և դարձնի բարեկեցիկ:

3.4 **Ֆիզիկական դաստիարակություն:** Մինչդպրոցականների ֆիզիկական դաստիարակությունը ամբողջ դաստիարակության համակարգում զբաղեցնում է յուրահատուկ տեղ:Երեխաներին խրախուսել ֆիզիկական վարժություններ կատարել,մեռրսումներ և հետևեն անձնական հիգենային:

3.5 **Աշխատանքային դաստիարակություն:** Երեխաների մեջ սերմանել ամենից առաջ սիրո դաստիարակություն աշխատանքի նկատմամբ:Զրուցել երեխաների հետ,որ առանց աշխատանքի հնարավոր չէ ապրել,որ աշխատանքն է պարգևում հոգևոր կյանքի ուրախությունը,լիակատարությունը:

3.6 **Բնապահպանական դաստիարակություն:** Նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ,որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է:Ճիշտ օգտագործելով տարբեր ուսման մեթոդներ:

4. **Դպրոց-ընտանիք կապը:** Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են:Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում,երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ,ձգտումներ և հայացքներ: